ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/57

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ Սիսիանի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Սիսիանի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Դ. Այվազյանի,
«Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Սիսիան համայնքի կարիքների համար Աղիտու և Վաղատին բնակավայրերի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 11.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի հայտը (գնային առաջարկը) անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 06.04.2022թ.-ի պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 11.04.2022թ.-ին:

12.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/57 համարի ծածկագիրը:

21.04.2022թ.-ին և 29.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 21.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.04.2022թ.-ին:

2. «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն 11.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սիսիան համայնքի կարիքների համար Աղիտու և Վաղատին բնակավայրերի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների նախագծանախա-հաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝

Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության /կցվում է/ 4-րդ կետի համաձայն՝ «Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը մերժվել է՝ հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 2-րդ մասը և 5-րդ կետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն հայտնել ենք, Սիսիան համայնքի կարիքների համար Աղիտու և Վաղատին բնակավայրերի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է գնային առաջարկը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

«Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ–ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է).

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /դրամներով և թվերով/	ԱԱՀ** /դրամներով և թվերով/	Ընդհանուր գինը /դրամներով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք,Աղիտու բնակավայր: ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք,Վաղատին բնակավայրեր	12 000 000 Տասներկու մլն ՀՀ դրամ	-	12 000 000 Տասներկու մլն ՀՀ դրամ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել հետևյալի վրա.

Նախ և առաջ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը մերժվել է՝ հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 2-րդ մասը և 5-րդ կետը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխա¬նությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2022թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը մերժվել է՝ հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 2-րդ մասը և 5-րդ կետը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը վերացական է, չհիմնավորված, և մնում է միայն կռահել, թե ներկայացրած գնային առաջարկում ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել և այն ինչով չի համապատասխանում հրավերի ինչ պահանջներին: Մինչդեռ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը և Կարգի 43-րդ կետը հստակ պահանջում են,

որ գնահատող հանձնաժողովի հայտը մերժելու մասին որոշումը լինի հիմնավորված, ինչը տվյալ դեպքում առկա չէ:

Ավելին, բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ ըստ էության, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի կայացվել «Բյուս Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշում, այլ կայացվել է գնային առաջարկը մերժելու որոշում, մինչդեռ նման իրավասություն գնահատող հանձնաժողովը չունի, և ընդհանրապես, նման կատեգորիա չկա գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ:

Իսկ եթե փորձենք կռահել, թե ի վերջո, «Բյուս Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկում ինչ խնդիր կարող էր արձանագրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, այս մասով հայտնում ենք հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով.

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված.

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումարները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը.

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով :

Այսպիսով, հայտով Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում, որպես արժեք տառերով գրվել է «Տասներկոկու» բառը, որից գնային առաջարկի հաշվարկը չի խախտվել, ինչ վերաբերվում է այն փաստի, թե իբրև չափաբաժնի անունը ճիշտ չի գրվել, ապա նշենք, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերով, այդ թվում նաև Հավելված 2՝ գնային առարկով, հստակ նշվել է, որ Ընկերությունը գնային առաջարկը ներկայացրել է «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման համար:

Գտնում ենք, որ այս առումով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել ձևական վարչարարություն, քանի որ Ընկերության կողմից ներկայացրած գնային առաջարկը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Այսպիսով, գտնում ենք, որ Սիսիան համայնքի կարիքների համար հայտարարված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը: Միևնույն ժամանակ առկա է նաև Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և Կարգի 43-րդ կետի պահանջների խախտումներ:

Բողոքներ քննող անձին նաև խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից դրսևորած ձևական վարչարարության հետևանքով Սիսիան համայնքին հասցվելու է 1 մլն. ՀՀ դրամի վնաս, քանի որ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը 1 մլն. ՀՀ դրամով ավելի ցածր է, քան հաղթող մասնակցի գնային առաջարկը:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի հայտը (գնային առաջարկը) անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 06.04.2022թ.-ի պայամանագիր կնքելու մասին որոշումը:

3. <u>Սիսիանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 12.04.2022թ.-ին /ԲՔԱ-ԼՕ/2/6328-2022 գրությամբ դիմել է Սիսիանի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի 11.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 22.04.2022թ.-ին ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«Սիսիանի համայնքապետարանը հայտնում է «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի վերաբերյալ դիրքորոշումը:

ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում 2022 թվականի ապրիլի 4-ին ժամը 11.00-ին armeps.am համակարգի միջոցով բացվել են հայտերը, որտեղ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում գնային առաջարկը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականին 526-Ն որոշման պահանջներին, մասնավորապես վերոնշյալ որոշման 32-րդ կետի 2-րդ մասով և հրավերի 5-րդ մասով սահմանվում է հայտի գնային առաջարկի սխալ լրացման թվով 6 պարբերություն, որոնց դեպքերում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման:

Նշվում է հետևյալ պարբերությունները.

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված աւրժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը և՝ տառերով, և՝ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին, գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը, ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված Են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

«Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում չափաբաժնի անվանումը սխալ է լրացված, քանի որ հրավերով չափաբաժնի անվանումը հետևյալն է.

«Սիսիան համայնքի Աղիտու և Վաղատին բնակավայրերի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ», իսկ մասնակիցը նշել է այլ անվանում, ինչպես նաև նույն գնային առաջարկում «Բյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել 2-րդ սխալը: Արժեք և ընդհանուր գնի սյունակներում տառերով գրված բառն իրենից ներկայացնում է գոյություն չունեցող թիվ:

Ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականին 526-Ն որոշման պահանջները, գտնում

ենք, որ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը սխալ է լրացված, որը չի համապատասխանում սահմանված թույլատրելի պահանջներին և հիմք է հանդիսանում հայտի մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Սիսիանի համայնքապետարանի կողմից Սիսիան համայնքի կարիքների համար Աղիտու և Վաղատին բնակավայրերի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարվել է «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 04.04.2022թ.-ին:

ii. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում Սիսիան համայնքի կարիքների համար Աղիտու և Վաղատին բնակավայրերի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերումը, որը խմբավորված է մեկ չափաբաժնում:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն:

iv. «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք. Աղիտու բնակավայր: ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք. Վաղատին բնակավայր:	12 000 000 Տասներոկու մլն ՀՀ դրամ	-	12 000 000 Տասներոկու մլն ՀՀ դրամ

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն, ուստի Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը և գնման ընթացակարգի հրավերի 5-րդ կետը, որոշել է մասնակցի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 11.04.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման,

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի

Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Սիսիանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Սիսիան համայնքի կարիքների համար Աղիտու և Վաղատին բնակավայրերի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարված «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով

սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սիսիանի համայնքապետարանի կողմից Սիսիան համայնքի կարիքների համար Աղիտու և Վաղատին բնակավայրերի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարված «ՍՄՍՀ-ԳՀԾՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ

ներկայացրած «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք. Աղիտու բնակավայր: ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք. Վաղատին բնակավայր:	12 000 000 Տասներոկու մլն ՀՀ դրամ	-	12 000 000 Տասներոկու մլն ՀՀ դրամ

Հանձնաժողովի 04.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն, ուստի Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը և գնման ընթացակարգի հրավերի 5-րդ կետը, որոշել է մասնակցի հայտը մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի «աշխատանքի անվանումը» սյունյակում, որպես գնման ընթացակարգով նախատեսված ծառայություն նշվել է՝ «ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք. Աղիտու բնակավայր: ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան համայնք. Վաղատին բնակավայր:» անվանումը, սակայն պետք է նշվեր՝ «Սիսիան համայնքի կարիքների համար Աղիտու և Վաղատին բնակավայրերի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ» անվանումը:

Ուստի նման պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերությունը թիվ 2 հավելվածի՝ գնային առաջարկի «ծառայության անվանումը» սյունյակում սխալ է լրացրել գնման առարկայի անվանումը, որպիսի պայմաններում «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի հայտը ենթակա էր մերժման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ, տվյալ դեպքում, «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի «ծառայության անվանումը» սյունյակում գնման առարկայի անվանումը սխալ նշելու հանգամանքը պետք է գնահատել որպես գնային

առաջարկին վերագրվող անհամապատասխանություն, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բլյու Սթրիմ Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից 11.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/57 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**